Դ. ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 տոլ.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. Երեքէն աւելի անգամներու համար 20 0|0 զեղչ կ'ըլլայ.
Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել Խմբագրութեան հասցէին
—
Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна
Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)
—
Դրութիւնք ետ չեն տրուիր
Արտասահմանի ձեռքէ)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքէ)(15 ՍԱՆԹԻՄ)(

☛ Արդէն «Շարժում»ի երրորդ տարեշրջանը լրացաւ, ու տակաւին արտասահմանի մաս մը բաժանորդներ իրենց բաժնեգինները չեն ղրկած, մանաւանդ ամերիկացի բաժանորդները։ Ամբողջ տարի մը ապառիկ թերթ ղրկելէ ետքը, երբ դեռ կը խնայենք, արդէն կը կարծենք թէ պէտք եղածէն աւելի ազնուութեամբ վարուած կ'ըլլանք մեր բաժանորդներուն հետ, և կը փափագինք որ, բաժանորդներն ալ չարաչար չի գործածեն զայն։

Խմբագրութիւն

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՀԱՏ

Մեր հասարակութիւնը, նոյնիսկ նրա գիտակից համարուած դասակարգի մի մասը դեռ մինչեւ օրս էլ լաւ չէ ըմբռնել «անհատ» և «կուսակցութիւն» բառերի բուն իմաստը. այդ պատճառով էլ մեզանում ոեւէ յեղափոխական կուսակցութեան գործը կամ հաւաքական կարծիքը, լաւ թէ վատ, յաճախ վերագրվում է կուսակցութեանը պատկանող ոեւէ անհատի, կամ թէ ընդհակառակը՝ կուսակցութեան ոեւէ անդամի գործը և կարծիքը կուսակցութեան։

Ճիշդ է, թէեւ կուսակցութիւնները կազմվում են գաղափարակից և համամիտ անդամներից, բայց չը պէտք է մոռանալ որ այդ համաձայնութիւնը տեղի է ունենում միայն կուսակցական ծրագիրների հիմնական կէտերի վերաբերմամբ այլ ոչ ընդհանրապէս։ Եթէ այդպէս չը լինէր, կուսակցական անհատները պէտք է բոլորովին իրենց ինքնուրոյնութիւնը կորցնէին, մարդամեքենաներ դառնային և կուսակցութիւնները չորացած կմախքներ դառնալով՝ կաստաների պէտք է վերածվէին։

Բարեբախտաբար, կանոնաւոր գաղափարական կուսակցութեան մէջ՝ անդամը չէ զրկվում իր անհատական ազատութիւնից ու ազատ է իր կարծիքը յայտնել և իր խորհրդածութիւնները անել ոեւէ հասարակական գործի կամ երեւոյթի մասին։

Այս կարճ բացատրութիւնից յետոյ՝ խօսքերս մասնաւորենք։

Մենք յաճախ նկատել ենք որ այսինչ կամ այնինչ դաշնակցական գործիչի սոսկ անհատական գործը կամ կարծիքը վերագրել են ամբողջ Դաշնակցութեան. Եւ շատ սխալվել են. որովհետեւ Դաշնակցութեան ամէն մի գործը կատարվում է նրա մարմինների հաւանութեամբ և որոշումով, իսկ հաւաքական կարծիքը և համոզումը կուսակցութեան օրգանի՝ «Դրօշակ»ի միջոցաւ է յայտարարվում։

Պարզ է որ Դաշնակցութեան ոեւէ անդամը իբրեւ մասնաւոր անհատ կարող է զանազան երեւոյթների մասին իր պաշտօնակից կամ պաշտօնաւոր ընկերներից տարբեր կարծիքներ և համոզումներ ունենալ ու տրամադիր լինել նրանց հրապարակել. բայց այդ անհատական կարծիքները ու համոզումները չեն կարող օրգանի մէջ հրատարակվել, որովհետեւ կուսակցութիւնը ամբողջովին դեռ այդ եզրակացութեան չէ եկել։ Ուրեմն ոեւէ անհատ դաշնակցականի կուսակցութեան օրգանի միջոցով չը հրատարակած կարծիքները և համոզումները երբէք պաշտօնական չեն, ու չեն կարող վերագրվել ամբողջ Դաշնակցութեան կամ նրա ոեւէ մարմնին։ Այդ ուրիշ խնդիր թէ դաշնակցական անհատի կարծիքները և համոզումները մամուլի միջոցով քննադատվելուց ու ծեծվելուց յետոյ, վերջ ի վերջոյ կարող են Դաշնակցութեան հաւանութիւնը ստանալ։

Շատ անգամ լսել ենք որ «Շարժում»ի մէջ յայտնված համոզումները և կարծիքները իբր դաշնակցութեան հաւաքական համոզում և կարծիքներ են ընդունվել։ Ինչո՞ւ. որովհետեւ նախ «Շարժում»ի խմբագիրը դաշնակցական է, երկրորդ որ դէպքեր են պատահել՝ ուր զանազան խնդիրների և երեւոյթների մասին Դաշնակցութեան օրգանն էլ նոյն մտքով է խօսել։ Ահա չփոթեցնող պարագաները։

Այդ մութ կէտերը պարզելու համար մենք աւելորդ չենք համարում յայտարարել որ, բուն դաշնակցական լինելով հանդերձ, մեր կարծիքները «լոկ անհատական են», երբեմն էլ տարբեր մեր պաշտօնաւոր ընկերների կարծիքներից. բայց չենք ուրանում և այն, որ մենք միշտ աշխատում ենք, ի հարկէ մեր կարողութեան և ընդունակութեան չափով, մեր ունեցած կարծիքները և համոզումները կարելի եղած չափով ընդհանրացնել և մեր բոլոր ընկերների միջեւ։

ՎԱՐԴՈ

ԸՆԿԵՐԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՆ
(DIE SOZIAL-OEKONOMISCHE TURKEI)

Այս է խորագիրը Գերմաներէն նոր գրքոյկի մը զոր խումբ մը հայ ուսանողներու յանձնարարութեամբ գրած ու Պեռլինի մէջ հրատարակած են Պ. Պ. Տօքթէօր Վ. Թօթօմեանց և Ե. Թօփճեանց։

Գրքոյկը կը բաղկանայ 124 երեսներէ և բաժնուած 11 գլուխներու։ Իր պարունակած տեղեկութիւններուն աղբիւրն եղած են հայ և օտար լրագրութիւնը, ինչպէս նաեւ Եւրոպական և ռուսական ուրիշ բազմաթիւ հրատարակութիւններ։

Ա. գլուխը ներածութիւն մըն է որ Օսմանեան պետութեան պատմական ծագումը քանի մը բառով յիշեցնելէ ետքը կը բացատրէ թէ ինչպէս այս տէրութիւնը իր զուտ աշխարհակալական նկարագրին և ծայրայեղ կրօնամոլութեան հետեւանքով անկարող եղած է ոչ միայն իր նուաճած օտարազգի տարրերը գոնէ աստիճան մը իր մէջ ձուլելու, այլ և նոյն իսկ զանոնք քիչ շատ սիրաշահելու։ ընդհակառակը Թուրք կառավարութեան սկզբունք եղած է իրեն հպատակ բայց մտային կարողութեան և տնտեսական գործունէութեան տեսակէտով իրմէ բարձր ազգերը հալածել, ճնշել, բռնութեամբ չահագործել և ստրուկ դիրքի մէջ պահել։ Թուրքը ինք աշխատելու, արդիւնագործելու և յառաջդիմելու անկարող՝ չէ թողուցած նաեւ որ երկրին գոնէ միւս ընդունակ տարրերը ազատ ասպարէզ ունենան իրենց զանազան բնական կարողութեանց զարգացման համար։ Այս քաղաքականութեան ուղղակի արդիւնքն է Թուրքիոյ տնտեսապէս տակաւ փճանալը և քաղաքականապէս տկարանալը։ Շատ պարզ է որ ընկճուած և դժգոհ ազգերը ամէն առիթէ օգտուիլ փափաքէին թրքական լուծէն ազատուելու համար որ թէ՛ զիրենք սոսկալի կերպով կը ճնշէ միշտ և թէ իրենց ամէն ձերքբերու զարգացումը և ամէն փափաքները կը խեղդէ իրենց սաղմին մէջ։ Այս պատմական տեսութեամբ գրքոյկին հեղինակները կը փափաքին ապացուցանել թէ «այն դէպքերուն պատճառը, որոնք վերջին ժամանակները կատարուեցան Հայաստանի մէջ, պէտք չէ փնտռել յեղափոխականներու գործունէութեան, ոչ ալ արտասահմանէ եկող գրգռումներու, այլ երկրին տնտեսական անկումին և Թուրք կառավարութեան քանդող ռէժիմին մէջ»։

Բ. գլխին խորագիրն է «Հայերն և Հայկական խնդիրը»։ Հայերը թուով, տոկունութեամբ, կարողութեամբ և տնտեսական գործունէութեամբ կը գերազանցեն Թուրքիոյ ուրիշ քրիստոնեայ ցեղերը և կառավարութեան համար տուրքի գլխաւոր աղբիւրն են։ Բայց եւ այնպէս վերջերս մանաւանդ ջարդի և հալածանքի անօգնական զոհերն եղած են։ Քանի մը վիճակագրական հրատարակութիւններ աչքի առջեւ ունենալով, միջին հաշուով մը, կարելի է հաւանական օրէն երկու միլիոն ենթադրել Թուրքիոյ հայերուն թիւը,

որուն 1208000 կը բնակի Փոքր Ասիոյ մէջ։

Դուռը 1891 որոշեց կազմակերպել Համիտիյէ հեծելազօրքը որուն պաշտօնն էր հալածել և հարստահարել հայերը, որպէս զի անոնց թիւը, որքան կարելի է նուազի սառապանքով, մահով և գաղթականութեամբ։ Դրան դիտումն էր մէկ քարով երկու թռչուն զարնել, թէ՛ հայերուն համար խոստացուած բարենորոգումներէն խոյս տալ առարկելով. թէ հայը Թուրքիոյ մէջ ամէն տեղ աննշան փոքրամասնութիւն մը կը կազմէ, և թէ՛ ռուս և թրքական պատերազմի մը պարագային մէջ, հայերուն տեղ, քրտական կռուող հոծ բազմութիւն մը ունենալ սահմանագլխի գաւառներուն մէջ՝ զայն քաղաքներուն դէմ հանելու համար։

Գրքոյկին հեղինակները կը նկարագրեն համիտիյէներուն գործած չարագործութիւնները որոնք հայերուս համար հին ու ծանօթ, կրնան գերմանացի ընթերցողներուն համար իբրեւ նորութիւն նկատուիլ և սոսկում ու զզուանք ներշնչել անոնց։ 95—96ի կոտորածներուն մասին գրքոյկին տեղեկութիւնները, ահռելի ցնցող պատկեր մը կը ներկայացնեն որ սակայն նոյնպէս նոր բան մը չունի բնականաբար հայերուս համար։ Եւրոպայ ինչպէս կատարուածներուն լուռ հանդիսատես եղաւ, այնպէս ալ հիմա անտարբերութեամբ կը դիտէ հայերուն արդի աննկարագրելի թշուառութիւնը որ կրնայ քիչ ժամանակի մէջ զիրենք բնաջինջ ընել։ Բայց Եւրոպա իր այս ընթացքէն ոչ միայն օգուտ մը չի պիտի քաղէ, այլ և արդէն կը վնասուի և պիտի վնասուի նիւթապէս։ «Եւրոպայ և իր դրամագլուխը պէտք ունին ընդհանրապէս Թուրքիոյ և մասնաւորապէս հայերուն ճակատագրովը շահագրգռուելու։ Որքան Թուրքիոյ մէջ յուզումներ և խռովութիւններ քիչ պատահին, այնքան աւելի կօգտուի Եւրոպայ. կիսավայրենի միսիլման ժողովրդին մէջ քաղաքակրթական ընդունակ միակ տարրը, հայը որքան հանգիստ ու ապահով ապրի, այնքան աւելի յառաջդիմութիւն պիտի ընէ Եւրոպական վաճառականութիւնը, և այնքան աւելի շուտ Թուրքիոյ մէջ պիտի ծաւալի քաղաքակրթութիւնը առհասարակ։ Այս իրողութիւնը աւելի բացայայտ կերպով երեւան կուգայ, երբ նկատողութեան առնենք այն ամէն ազգակները, որոնք Թուրքիոյ, իբրեւ ընկերական կազմակերպութեան մը, գոյութեան հիմը կը ներկայացնեն»։

Ակնարկուած ազգակները կը կազմեն յաջորդ գլուխներուն խորագիրները։

(Տարուեակէշի)

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Համար 1010

Ազնուափայլ
Տիկին Մարի Օրմանեան
Ատենապետ Թատերասէր խմբի
Ֆիլիպէի

Ստացանք փետրուար 12 թուականով ձեր ուղղած նամակն և գանձեցինք աղն. Շամտանճան էֆ.ներէ 14 1/4 (տասնըհինգ և մէկ քառորդ) օսմանեան լիրայի գումարն, զոր ի դիմաց քաղաքիդ թատերասէր խմբին, կուղարկէիք մեզ իբր արդիւնք նոյն խմբին կողմէ կազմակերպուած ներկայացման ի նպաստ գաւառաբնակ կարօտելոց։

Կը տեսնենք հաճոյքով որ կարօտեալները Ձեր ու Ձեր ազնիւ ընկերակցած ուշադրութեան և խնամոց առարկայ եղած են և քրիստոնէական գթութեան ոգւով ջանադիր գտնուած էք օգնութեան ձեռն կարկառել անոնց բարենպատակ ձեռնարկով մը։ Ուստի կը նուիրենք ձեզ ամե. նուդ մեր սրտագին օրհնութիւններն և կը մաղթենք ի բարձրելոյն Աստուծոյ պահպանել Ձեր կեանքն, զոր կուզէք արդիւնաւորել առաքինական գործերով։

Ողջ լինիք սիրոյ բոլոր գերդաստանիդ՝

Մնամք աղօթարար
Պատրիարք Կ. Պոլսոյ
ՄԱՂԱՔԻԱ ՕՐՄԱՆԵԱՆ
Կ. Պոլիս, 29 Փետր. 1901

ԾԱՆՕԹ. — Կարգադիր յանձնախումբը պատրիարքի այս նամակը հրատարակելով հանդերձ, կը յայտարարէ որ իր քովը մնացած 3.80 լէվը յանձնած է Ֆիլիպէի աղքատախնամ ընկերութեան։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՒՐԻԶ, 14 Փետրուար

Շահի հրովարտակը արձագանք է գտել Թէհրանի հայ մի քանի ուսումնասէր անձանց մէջ, որոնք «Պարսկաստանում ընդհանուր կրթական կեդրոնական մարմին եւ կեդրոնական դպրոց» հիմնելու միտքն են յղացել։ Այսօր մեր ձեռքումն է նրանց հրաւէրը, որով դիմում են Պարսկաստանի բոլոր յայտնի քաղաքների դպրոցների հոգաբարձութեան, բարեգործական ընկերութիւններին, ազգային այլ եւ այլ հաստատութիւններին եւ առաջնորդներին, որ մի մի ներկայացուցիչ ուղարկեն Թէհրան մինչեւ մարտ. մարտի 9ին այդ ներկայացուցիչներից կը գումարուի ընդհանուր ժողով, որտեղ կը մշակեն ծրագիր ապագայ կրթական մարմնի եւ կենտրոնական դպրոցի համար ու կը որոշուի թէ ո՞րտեղ հիմնել կրթական մարմինը կամ կենտրոնական դպրոցը։ Շատ համակրելի՛ միտք... Եւ չենք կարծում թէ Պարսկահայը այս անգամ էլ ցոյց կըտայ իր ցաւ դարձած անտարբերութիւնը այս հանրօգուտ գործում, ինչպէս ցոյց է տալիս հիմա առհասարակ ամեն ազգային գործերում։ Այդպիսի մէկ հաստատութեան անհրաժեշտութիւն կայ. ժամանակէ վերջապէս գլուխ բերելու, լինի դա Թէհրանում թէ Թաւրիզում. այդ ի հարկէ ընդհանուր ժողովը կը որոշի, միեւնոյն է, միայն թէ վերջ տրուի մեր մի քանի ցաք ու ցրիւ դպրոցների անկեալ վիճակին։

Երեկ քաղաքիս առաջնորդարանում հաւաքուել էին գաւառի ներկայացուցիչները խորհրդակցելու, թէ ի՞նչ պատասխան գրեն Թէհրանցիների հրաւէրին։ Ինչպէս ընդհանուր տրամադրութիւնից երեւում է Թաւրիզցիք չատ են ցանկանում, որ այդ ժողովը գումարուի եւ նոյն իսկ, եթէ հնարաւոր է, կրթական մարմինն ու կենտրոնական դպրոցն էլ այստեղ հաստատուի։ Եւ ահա այդ ոգով պատասխանում են, որ աւելի դիւրին է մի հինգ մարդուն Թէհրանից Թաւրիզ գալը, քան թէ այստեղից տասնեակ մարդեր Թէհրան ուղեւորելը, այն էլ տարւայ մի այսպիսի անյարմար եղանակին։ Բացի դրանից Թաւրիզում կան 40—50ի չափ ուսուցիչներ եւ ուսումնական գործին կարող անձինք, որոնք դպրոցական ծրագիրներ մշակելու գործում կարող են բաւական աջակցութիւն ցոյց տալ։ Մինչդեռ չենք կարծում թէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՐԻՆԱ

ԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ ՄԸ

1876Ի ՊՈՒԼԿԱՐ ԱՊՐԻԼԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵՆԷՆ

(Շար. նախորդ թիւէն)

Կառավարութիւնը այդ ահագին իրարանցումի առջեւ, վարկեան մը վարանման մէջ ինկաւ, բայց իսկոյն իր ընելիքը որոշեց. հինգ Թուրք խումբը, չէրքէզներէ ու պաշըպօզուքներէ հրոսակային խմբեր կազմակերպեց եւ ազատ արտօնութիւններ տալով ուղարկեց պուլկար գիւղերը։

Աւազակներէ, մարդասպաններէ ու ոճրագործներէ կազմուած այդ վոհմակները սասանեցուցին երկիրը. ուր որ գացին, արիւն կրակ, ողբ ու կոծ ձգեցին։

Այսպէս Թրնովայէն անցան չէրքէզներէ ու պաշըպօզուքներէ կազմուած ստուար հրոսախումբեր եւ ուղղուեցան դէպի Տրեանովայի վանքը, ուր պուլկար յեղափոխականները տեղւոյն անառիկ դիրքերը գրաւելով ու մարդկոցներ կանգնելով ամրացեր էին։ Վանքի պաշտպանողները մօտ երեք հազար հոգի էին. ասոնցմէ միայն 500 հոգին իրենց կոչման կը համապատասխանէին՝ իբրեւ ճշմարիտ յեղափոխականներ, միւս մասը տեսնելով որ իրենց գործը լաւ չերթար եւ Թուրքերն ալ Պալքանի ճամբան խափանած էին զինուորական ուժերով, փախուստ տուին։ Հինգ հարիւր հոգին լաւ մը տեղաւորուելով վանքի դիրքերուն մէջ, իսկոյն տակուն պատնէշներ կանգնեցին, ամէն ռազմական միջոցները ի գործ դնելով, ինչ որ բերդի մը ամրութեան ու պաշտպանութեան կը վերաբերի, մինչեւ յաղթին չունեցող դիմադրելու որոշումը [illegible]։ Չէրքէզները պաշըպօզուքները իրենց խառնիճաղանճ խմբերով չուզեցին վանքի առջեւ երեւնալու, բայց իրենց գոռում-գոչումը, անդադար հրացանաձգութիւնը [illegible] կրցաւ հասցնել վանքի քաջարի պաշտպաններուն։ Յարձակողները չէ կրցին բան մը ընել, տեղի տուին եւ իրենց զայրոյթը անզէն գիւղացիներու վրայ թափեցին։ Չէրքէզներու վայրագ երգերը ու խայտաճամուկ զինեալ հրոսակներու ահռելի տեսքը ահ ու սարսափ ձգած էր Թրնովացիներու վրայ։ Միեւնոյն օրը ուրիշ հրոսակներ Ռուսչուքի գիւղերը անցան, եւ երկրորդ օրը, բոլորն ալ եաթականներու վրայ ցցած գլուխներով կը վերադառնային, երկուքով, երեքով եւ դիւային ուրախական աղաղակներով օդը թնդացնելով։ Արիւնալի խնճոյքը սկսած էր. Նովօ-Սէլօ գիւղը պաշըպօզուքներու սուրին զոհը եղաւ։ Կացութիւնը աւելի ծանրացաւ, երբ Ֆազըլ փաշայի [*] հրամանի ներքեւ գունտ մը կանոնաւոր զօրք թնդանօթով միասին հասաւ Ռուսչուքէն։

Ֆազըլ փաշա իր ամբողջ զինային ուժը վանքին վրայ թափեց. վանքի անառիկ ու ռազմական դիրքը եւ իր ամուր շինութիւնները, կռուի սկիզբները փաշային ալ ուժը արհամարհեցին... Հայրենիքի փրկութեան այս միակ վերջնակէտը առիւծաբար կը պաշտպանուէր պուլկար յեղափոխականներէն. Թնդանօթներու ռումբերը կը խրուէին վանքի հաստ պատերու մէջ, եւ հոն անմնաս կը մնային. կանոնաւոր պատերազմ մըն էր որ յամառաբար երկու կողմէն ալ կը շարունակուէր։ Յեղափոխականները տասը օր դիւցազնաբար դիմադրելէ յետոյ, պաշարուածներուն կոչը ուժի առաւ տեղի տալ եւ, առանց անձնատուր ըլլալու, հայրենիքի բազմակոյտ [illegible] վրայ իրենց ոսկորներն ալ ցրեցին, անձինք յիշատակ մը թողնելով պուլկար յեղափոխութեան տարեգրին մէջ։ [**]

Ս. Թ.

[*] Այս փաշան չէրքէզներու ու պաշըպօզուքներու խմբերուն ընդհանուր պաշտպանն էր, մինչ անոր [illegible] գտնուած է [illegible] ներուն գլխ. Լաւ զինուորական [illegible] Դավիթ Օսման փաշան հրամանատարութեան ներքեւ, առանձին զօրաբաժին մը գլուխ անցած, զօրավար Սուլէյման [illegible] եւ [illegible] մեծ վնասներ հասցնելով անոնց։

[**] Տրեանովոյի վանքը երկու ժամ հեռու է Թրնովայէն, Պալքանի անմերձենալի ու գեղածիծաղ լանջերու վրայ, երեսը դէպի Դանուբ։

Թէհրանում նոյն դիւրութիւնները լինեն ։

Ընթերցողը այստեղից պարզ նկատում է, որ դեռ գործի առաջի քայլերում երկու նահանգների միացման դէմ խոչնդոտներ են մէջ տեղ բերվում եւ միմեանցից անջատ ու անկախ գործելու տրամադրութիւն ցոյց տալիս ։ Եւ դա մենք շատ բնական ենք գտնում ։ Որովհետեւ ի՞նչ կապ երկու նահանգների մէջ, երբ բնութիւնը ինքը 20 օրւան երկար ու ձիգ ճանապարհով անջատել է նրանց եւ հաղորդակցութեան ոչ մի յարմարութիւն չը կայ ։ Նոյն իսկ նամակներով միմեանց գրել եւ պատասխան ստանալը ամիսներ կը քաշի ։ Իսկ եթէ հաղորդակցական այս դժուարութիւնները մի կողմ դնենք եւ այնպէս դատելու լինենք, թէ ո՞րտեղ աւելի նպատակայարմար կը լինէր մի այդպիսի կրթական հաստատութիւն հիմնել, մենք աւելի նախապատուութիւն կը տայինք Թաւրիզին, քան թէ Թէհրանին ։ Թաւրիզ ասելով քաղաքը չենք ուզում ասել, այլ ամբողջ Ատրպատականի թեմը, որի կենտրոնը կարող է Թաւրիզը համարվել ։ Ահա թէ ինչու ։ Նախ Ատրպատականի թեմը թւով աւելի շատ հայ ազգաբնակութիւն ունի, քան թէ Սպահանի թեմը. երկրորդ՝ Ատրպատականի թեմի գաւառները աւելի մօտ են միմեանց քան թէ Սպահանինը ։

Եթէ, օրինակ, առնենք թէ Ատրպատականի գաւառներից ուզենան գալ Թաւրիզ, ամենաերկար ժամանակը կը քաշի երեք օր, եւ կարճը մի քանի ժամ. իսկ Սպահանինը ամենակարճը մի շաբաթ, իսկ երկարը գուցէ մի ամիս եւ էլ աւելի... Այս տեսակէտից ասում ենք մենք Ատրպատականը աւելի նպատակայարմար ենք գտնում, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք որ, այստեղ նախամտածված կենտրոնական դպրոցի համար հաւաքված փողեր կան եւ մէկ եռանդուն մարմնի ջանքերին պէտք ունեն, որ վաղուց մեր փայփայած յոյսերը իրականան ։ Իհարկէ մենք չենք վիճի, եթէ մեր Թէհրանցի եղբայրները քաղաքական տէսակէտներով աւելի յարմար գտնեն Սպահանը, քան թէ Ատրպատականը. այդ միմիայն մեր կարծիքն էր որ յայտնեցինք ։ Մեր փայփայած գաղափարն է այդ, եւ օր առաջ այդ կրթական հաստատութիւնը կազմ ու պատրաստ կուզենք տեսնել ։ Ցանկանում ենք մեր Թէհրանցի եղբայրներին ուժ ու կորով որ իրենց ձեռնարկած գործը եռանդով առաջ տանեն ։

Մենք էլ աջակցե՛նք ։

ՄԻՐԶԱ

ՍՈՒԼԹԱՆԻՆ ԿԵԱՆՔԷՆ

Այս օրերս Փարիզի մէջ կը հրատարակուի գիրք մը՝ որուն մէջ կը խօսուի Ապտիւլ Համիտը իր ամենէն ճշգրիտ և եղեռնական կողմերովը ։

Այս գիրքը որ ծայրէ ի ծայր սարսռեցուցիչ նկարագրութիւն մը կը պարունակէ, հաւատարիմ պատկերն է Կարմիր-Գազանին որ մարդու կերպարանք ունի. դէմք մը՝ քամահրելի, մահազդեցիկ, վտանգաւոր և գիտուելու անախորժ ։

Այդ գրքին մէջ կը նկարագրուի թէ՝ այն ժամուն երբ ամէն մարդ դեռ քունի մէջ է, Սուլթան Համիտ աշխատութեան սեղանին առջեւ նստած՝ լրտեսներու տեղեկագիրները աչքէ կանցունէ և Բարիզէն, Լոնտոնէն, Ժընէվէն ու Գահիրէէն ղրկուած գաղտնի գործակալներու ծածկագիր հեռագիրները կը լուծէ ու նորանոր ամբաստանութիւններու շարք մը կը յօրինէ ։

Երբ արեգակը կը փայլի հորիզոնին վրայ Ապտիւլ Համիտ դեռ թղթակցութիւններ կը պատրաստէ լրտեսներուն և գործակալներուն ու ձերբակալութիւններու հրամանագրեր կուղղէ իր ոստիկանական պաշտօնեաներուն ։ Երբեմն երբեմն տժգոյն դէմքը հազիւ վեր կը վերցնէ հոկելու համար սրճապետին վրայ, որ իրեն համար սիկարէթներ կոլորէ, որպէսզի ծխախոտին մէջ թոյն չը կարենայ խառնել ։

Ժամը 10ին գրեթէ միշտ իր քարտուղարներուն հետ կը խորհրդակցի, երբեմն ալ նախարարներուն հետ. ամէն խորհրդակցութիւն կարճ կը տեւէ, բայց շատ վտանգաւոր անոնց համար, որոնք իր ներկայութեանը կոչուած են ։

Բիչ մը չափազանցուածին շարժում մը, կամ արագ քայլ մը և կամ պարբերաբար ընդհատուած խլրտում մը կը բաւեն անմիջական և անվրէպ մահ մը պատճառելու. կը քաշէ Սուլթան Համիտ իր գրպանէն վեցհարուածեան մը և վայրկենապէս ուղեղը կը պայթեցնէ այն անխոհեմին որ իրեն կասկածներ և վախ ներշնչած էր ։

Ապտիւլ Համիտ չը սիրեր ընդունիլ դերձակը կամ կօշկակարը որ փորձի համար պէտք ունի անգամ մը իրեն ներկայանալու ։ Ահա թէ ի՞նչ կը պատմէ նորին Գտղանութեան առաջին դերձակը. «կը մտնամ Ըլտըզի սրահներէն մին ուր կայսեր հանդերձապետը՝ Իսմէթ պէյ կուգայ առնել տարած հագուստս և կանցնի ուրիշ սրահ մը. քանի մը վայրկեաններէ վերջ, դուռ մը կը բացուի և Սուլթանը հագած անկատար հագուստը (ընդհանրապէս «սատմպուլին») որուն կտորները ճերմակ դերձանի կարերով իրարու կցուած են, սեմին վրայ կերեւայ և կը յառաջանայ ուղղակի դէպի դիմաց ինձմէ 3—4 մէթր հեռաւորութեամբ և միեւնոյն ուղղութեամբ ետ դառնալով կաներեւութանայ ։

Փորձը կատարուած է. Իսմէթ պէյ յարգալից և ձեռնամած ներկայ կը գտնուի այդ տարօրինակ տեսարանին որուն միջոցին պէտք է որ ես դիտեմ պակաս կողմերը և վայելչութեան վրայ ապահով ըլլամ» ։

Ընդունելութիւններէ վերջ Սուլթանը երկայն աթոռի մը վրայ երկննալով կը հանգչի, յետոյ եթէ այլեւս զբաղում՝ չունենայ, քիչ մը օդ շնչելու կելլէ իր պալատան պարտէզին մէջ. ամէն շաբթու այս պտոյտներուն սահմանը կը պզտիկնայ, այնպէս որ այսօր հազիւ իր բնակած շէնքին շուրջը դեգերելու համարձակութիւնը ունի ։

Պտոյտէն վերջ կա՛մ կանանոցը կայցելէ և կամ քանի մը ժամ կը բանտարկուի իր քիմիական աշխատանոցին մէջ ուր քննութիւններ կը կատարէ ։ Սուլթան Համիտ թոյներուն գաղտնիքը գտնալ կը ճգնի, տեսակները կուսումնասիրէ, անոնց դեղթափներուն յատկութիւնները կը ճշդէ, խել մը ուտելիքները կը տարրալուծէ գիտնալու համար թէ ո՛րքան օգտակար և ո՛րքան վնասակար են անոնք ։

(Մնացածը յաջորդիվ)

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

Վաղը կիրակի գիշեր 11 մարտ ժամը 8 1/2ին առաջնորդութեամբ Տիկ. Պայծառ Փասուլեաճեանի ըստ խնդրանաց բազմաթիւ ազգայնոց պիտի ներկայացնեն.

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐ

Ինպաստ խմբին կատակերգակ Պ. Թորգոմին ։

Գիները սովորական ։

Ֆազլը փաշա ապստամբները ջարդելով ու վանքն ալ քանդելով Կապրովա դարձաւ, եւ այնտեղի կիմիագիւղի ուսուցիչները ամէնքն ալ շղթայակապ Թրնովա ղրկեց ։

Թրեվնայի, Տրեանովայի, Կապրովայի եւ Թրնովայի գիւղերու խաղաղ բնակիչներու արիւնով կշտանալէն յետոյ, մայիսի սկիզբները Ֆազլը փաշա յաղթանակաւ Թրնովա վերադարձաւ ։ Իր մուտքը շատ հանդիսաւոր ու շքեղ էր ։ Ապստամբութիւնը գլխովին յաղթական կառքը կը դարձէին վարժապետ (տասքալ) Բիրօ եւ երկու վօյվօտաներ ։

Իրինան որ փաշայի հանդիսաւոր մուտք գործած պահուն լուսամուտն էր, երբ տեսաւ իր հայրը որ յաղթութեամբ հրճուող թշնամւոյն խիտ բազմութեան ետեւն էր, ու թշնամին ուրախութեամբ իր հերոսը կը դիմաւորէր՝ խեղդուկ ու խոր հառաչ մը արձակեց ։

— Խեղճ... կըսէին տնեցիները երբ օրիորդը վերի յարկը իր սենեակը քաշուեցաւ ։

— Ի՞նչ պիտի ըլլայ այս աղջկան վիճակը, մտահոգութեամբ ըսաւ մօրաքոյրը ։

— Անոր հետ մենք ալ կրնանք փորձանքի հանդիպիլ, ըսաւ իր ամուսինը ։

— Մեր տան մէջ բացի Սթանլէն ոչ ոք կրնայ հրամայել, կը վախնամ որ աս քոնաքը իմաց տայ թէ Բիրօի աղջիկը մեր քովն է—հիմակ անոր մօտ կերթամ, պիտի ըսեմ որ հանդարտ նստի, չէ թէ ասկէց յետոյ իր տալը չեմ, Աստուած վկայ անոր աչքերը կը ճանկեմ. աս ըսելով Իրինայի մօրաքոյրը հագուեցաւ եւ չորպաճի Սթանէինին անախորժ այցելութիւն մը տալու գնաց ։

— Իրինան մի տանիր, տեսա՞ր աղջիկը իր հայրը տեսնելով ինչպէս այլայլեցաւ, եւ գիտես հոն, ի՞նչպէս պիտի վարուին անոր հետ ։

— Եթէ այդպէս է, դու անոր քովը գնա, զայն մխիթարելու համար բանով մը խաբենք ։

Իրինա լսելով որ քեռին զինքը կը կանչէ, ինք հիւրասէր ազգականին առաջքը առնելով ըսաւ.

— Այսօր ձեր տունը պիտի թողնեմ ձեր հանգստութիւնը չը վրդովելու համար ։

Բարեսիրտ մարդը ժպտալով ըսաւ.

— Ո՞վ է ձեզ թող տուողը. տեսնա՞նք, մօրաքոյրդ ի՞նչ պիտի ըսէ, ալ ես եմ քու հայրդ ։

Այս խօսքերը փոխանակ մխիթարելու, հակառակ տպաւորութիւն ներգործեցին Իրինային վրայ. աս խօսքերով նա իր հօր մահուան վճիռը լսեց, իր անկախութեան բռնաբարումը զգաց. նա ուրիշ աղջիկներու պէս հնազանդելու չէր սովորած, իր ծնողքը շատ ազատ ձգած էին զինքը ։ Եւ քայլ մը առնելով ըսաւ իր քեռիին ։

—Հայրս դեռ ողջ է, ինքզինքս պաշտպանել գիտեմ, եւ իր ծոցէն բէվօլվէր մը հանելով յարեց—քանի որ աս ձեռքս է, Թուրքերը զիս ողջ չեն կրնար բռնել ։

Իրինայի ազգականը չը հասկնալով անոր միտքը, նա ալ ուզեց պարծենալ թէ առանց զէնքի չէ եւ ըսաւ.

— Մենք ալ պարապ չենք, ես երկու մարթին ունիմ, Օրհօվիցայէն առած եմ, ես ալ կրնամ սատկեցնել... ի՞նչ կը կարծես աղջիկս...

Օրիորդը ուրախութեամբ գիտեց որ առելութիւնր օր աւուր կաճէր եւ ազգին ընդհանուր հոգեկան կացութիւնը այդ նախճիրներէն յետոյ այլ կերպ տրամադրուած էր իր հարստահարիչներուն դէմ. հարուստները, քաղքի էն ապահով ու հանգիստ կեանք վայելող դասակարգն ալ տիրապետողներուն դէմ ազգային ո՛խ մը ունէին. Իրինան զարմացաւ այս երեւոյթին վրայ ։

Նա ուզեց սենեակէն դուրս ելլելու ։

— Ո՞ւր հարցուց քեռայրը ։

— Հօրս մօտ կերթամ, պատասխանեց Իրինան ։

— Սպասէ, մօրաքոյրդ հիմա կուգայ, մի աճապարեր, հայրդ պիտի տեսնաս, շատ կարելի է որ իրեններն, եթէ չորպաճի Սթոնէն ուզէ

187*ին հօս յուսահատ ընդդիմադրութեան ապահով կէտ ընտրուեցաւ պուլկար յեղափոխականներէն, բայց շատ եղերերգական վախճան ունեցաւ, միալով առանց պաշարի, 500 հոգի, գովելի քաջութեամբ, իրենց պարտքը կատարեցին իրենց ոսկորները վանքի փլատակներու տակ թողլով ։ Տրեանովօյի վանքի կռիւը, միակ ապստամբութեան կեդրոնն է, ուր Հիւսիսային Պուլկարիա կրցաւ Յեղափոխութեան Դրօշը պարզել—հաւասար իր Անդր-Պալքանի եղբայրներու հետ ։

Մ. Թ.

ԱՐԳԱՀԱՏԵԼԻ ԻՄԱՍՏԱԿԻՆ

—

Մգլոտածները վերնագրով յօդուածին մէջ Հուր-Ալօ ցաւ կը յայտնէր որ ընդհանրապէս մեր վարժարաններուն մէջ ալ կը գտնուին մգլոտած ուսուցիչներ և պարտք կը դնէր բոլոր պաշտօնական մարմիններուն որ այդ տեսակները ալեն միանգամ ընդ միշտ մեր դպրոցներէն։ Նորեկ մը մանաւորել ուզեր է այդ գրութիւնը և տեղական թերթի մը մէջ մգլոտածի մը պաշտպան հանդիսանալու ջանքեր ըրեր է․ «Քօստոնները կը քերուին», կըսէ առածը։

Այդ քօսոտը, Վառնացիի դիմակին տակ սմքած ուլքած կը մնայ ծայրայեղօրէն մգլոտած հօր մը, ժառանգական օրէնքով մգլոտած ուղեղով խեղճ տղեկ մը, որմով զբաղուիլ չարժեր բնաւ և չեմ յուսար որ Հուր-Ալօ զինջանի պատասխանել այդ արգահատելի իմաստակին,

ՏԵՂԱՑԻ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Քաղաքական ժողովը իր վերջին մէկ նիստին մէջ կարդալով հիւանդանոցի հոգաբարձութեան և նպաստից յանձնաժողովին ղրկած տեղեկագիրերը և լսելով Ս. Պատրիարքին բերանացի բացատրութիւնները գոհունակութեամբ տեղեկացաւ թէ Ազգ. Հիւանդանոցի որբանոցին մէջ թոքախտի համաճարակ չիկայ։ Բայց որպէսզի Հիւանդանոցի հոգաբարձութիւնը կարենայ պէտք եղած կարգադրութիւն ընել և մանաւանդ հոգ տանիլ որբերու սննդեան, որոշեց անոր տրամադրութեան տակ դնել Գարակէօզեան կտակին տոկոսը։

— Բարիզի գեղարուեստական Ակադեմիային մէջ փայլուն յաղթանակ մը տարած է բնիկ Պոլսեցի Պ. Սերովբէ Քիւրքճեան հայ երիտասարդը, որ 64 քաջ նկարիչ արուեստագէտներու մրցման մէջ առաջին մրցանակ ստացած է։ Ֆրանսական գեղարուեստական թերթերը խիստ գովեստով կը խօսին այդ երիտասարդի մասին։

— Ի նպաստ Մկրտիչ Սարըեանի որբերուն Սուրհանդակի խմբագրութեան կողմէ բացուած հանգանակութեան արդիւնքը հասած է 10,535 ղրշի։ Հանգանակութիւնը ալ փակուած է։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսական դեսպանը Բ. Դրան իմաց տուած է իր բացարձակ դժգոհութիւնը այն եղանակին վրայ որով Էրզրումի մէջ կազմուած մասնաւոր դատարանը քննած է քիւրտերու յարձակման խնդիրը։

—Այն լուրը որ իբր թէ Նէճիպ Մէլհամէ Սօֆիայի գլխաւոր քոմիսէր ընտրած է, բոլորովին անհիմն է․ Մէլհամէ կը մնայ այն պաշտօնին մէջ ուր որ կը գտնուէր առաջ։

— Դեսպանները Բ. Դրան հաւաքական ծանուցագիր մը տուեր են, ուր կը պնդեն թէ Պոլսոյ միջազգային առողջ. խորհրդի առաջին, երկրորդական քննիչի և հաշուակալի ընտրութեան իրաւունքը կը պատկանի այդ խորհրդին և Բ. Դուռը միայն պարտաւոր է այդ ընտրութիւնները հաստատելու։ Դեսպանները յայտարարած են որ, այս անգամ իբր բացառութիւն կրնան ընդունել Բ. Դրան ընտրելին, եթէ վերջինս պաշտօնապէս ընդունի վերոյիշեալ սկզբունքը։

ՌՈՒՍԻԱ

«Թայմզ» կը հաղորդէ թէ պաշարման վիճակի ենթարկուելու հրահանգ տրուած է Օտեսայի, Քիէվի և Խարքովի համար, ուսանողներու յարուցած խռովութեանց հետեւանքով։

Մոսկուայի մէջ, իշխանութիւնը յաջողած է նոր շարժումները զսպել, բայց կացութիւնը կրկին մտատանջութիւն կը պատճառէ չորս մեծ գործարաններու մէջ տեղի ունեցած գործադուլներուն պատճառաւ.

Յաջորդ թուով այդ խռովութիւններու մասին մանրամասնօրէն կը հաղորդենք։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Պուլկարիոյ բոլոր Մակեդոնական կոմիտէները մարտ 18ին Սօֆիայի մէջ ընդհանուր պատգամաւորական ժողով մը պիտի կազմեն քննելու համար այն վիճակը ուր կը գտնուի Մակեդոնական խնդիրը տէրութեանց բռնած դիրքին հետեւանքով։ Պատգամաւորական ժողովը պիտի որոշէ հետեւելիք գործունէութեան ուղղութիւնը ընտրելով կամ նախկին նախագահ հռչակաւոր Սարաֆօֆը կամ նոր նախագահ մը, ժէնէրալ Զօնչէֆ, որ նմանապէս մեծ հայրենասէր մըն է․ բայց նուազ խանդավառ քան Սարաֆօֆը։

ԹՐԱՆՍՎԱԼ

Պօէրներու կորուստը փետրվար ամսոյն մէջ 569 հոգի եղած է, բացի մօտ 1000 գերիներէն։ Ժէնէրալ Ֆրէնչի դէպի արեւելեան Թրանսվալ յառաջխաղացութիւնը հենգհետէ կը դժուարանայ անձրեւներու առատութեան պատճառաւ։ Անգլիացիք կրկին կորսնցուցեր են Տըվէթի հետքը։

ՉԻՆԱՍՏԱՆ

Ռուսիա վերջնականապէս դիմակը վար առած է այլ եւս չուզեր Թիէն Զինը պարպել։ Անգ. զօրավար Քամբէլ ցանկութիւն յայտներ է քաշել իր զօքերը, պայմանաւ որ Ռուսիա ալ նոյնն ընէ։ Իսկ ռուս զօրավարը մերժած է անգլիոյ առաջարկութիւնը ու կը պնդէ թէ երկիրը ռուսիոյ կը վերաբերի։ Ռուս ու անգլիացի զօրքերը դէմ դէմի կանգնած կը սպասեն. անգլիական զօրքերը ռուսականներուն համեմատութեամբ մէկի դէմ քսան են։ Անձկանօք Ս. Բէթէրսպուրկէն հրահանգի կը սպասուի, և եթէ կառավարութիւնը հաշտարար միջոցներու չի դիմէ, ռուս զօրքերը պիտի աշխատին իրենց դիրքերը պահպանել. անգլիայարձակումներուն դէմ։ Ամէն կերպ միջամտութիւն ի գործ կը դրուին խնդիրը խաղաղութեամբ վերջացնելու համար, բայց անյաջող կըլայ, երկուստէք որոշած են իրենց դիրքերը պահել ու միայն բռնի ուժի առջեւ տեղի տալ։

«Սթանտարտ» այս առթիւ կը գրէ․ «Մենք միայն մէկ լուծում կրնանք ընդունիլ, մինչեւ որ մեր անիրաւ ըլլալը չապացուցուի, պէտք է Ռուսիան ստիպել զօրքերը քաշելու, նոյնիսկ եթէ ամբողջ Բրիտանիոյ հարըստութիւնը սպառել հարկ ըլլայ այդ առթիւ»։

Отговорникъ:
Д-ръ МЖГЖРДИЧЪ ВАРТАНЪ

Печ. «Взаимность» — Варна.

կրնայ զանի ազատել, մօրաքրոյրդ անոր մօտ գնաց դու ալ կերթաս անոր աղերսելու. բաւական է որ զինջանի այս գործը իր վրան առնելու։

Իրինան այս խօսքերուն միայն գլուխը շարժեց. քեռայրը շարունակեց։

— Հաւատա, նա վատ մարդ չէ. միայն պօռոտախօս է, իր բերնին չափը չունի, նա շատ բարիքներ ըրած է։

— Զօ՞րպաճիներո՛ւն . . . ոչ ես, եւ ոչ ալ հայրս կը դիմենք։ Անոնք դաւաճաններ են։ Եւ քաշուեցաւ իր սենեակը։

Իրինան հոգեպէս ու ֆիզիքապէս ընկճուած, կուզէր առանձին մնալ իր թախիծներու, իր ջախջախուած յոյսերու, իր տխուր մտածմունքներու մէջ։ Նա ամբողջ օրը չը կրցաւ իր սենեկէն դուրս ելնել, սաստիկ ջերմ մը զինքը անկողին պառկեցուցած էր մինչեւ իրիկուն. ամբողջ գիշերը ուշագնաց ու զառանցանքներով անցուց, երկրորդ օրը կէս օրին փորձեց ոտքի ելնելու, բայց իր ոտքերը կը դողային, ամիսներով շարունակուող յաբաճուն հոգեկան վրդովմունքը իր փափուկ կազմը ուժգին կերպով խաղցած էր։

Անդառնալի կերպով որոշած ըլլալով իր հայրը տեսնել, նա մտիկ չըրաւ իր մօրաքրոջը աղաչանքներուն, որ վերադարձաւ, առանց չօրպաճի Սթանէն տեսնել յաջողելու։

Նա իր ամբողջ ուժը հաւաքեց եւ մեծ դժուարութեամբ մինչեւ քօնաք կրցաւ հասնիլ։

Ֆազլը-փաշա մեծ հանդէսով իր փառաւոր արշաւանքի վերադարձը տօնելու պատրաստութիւնը կը տեսնէր։

Ապստամբութեան գլխաւոր հերինակները՝ վարժապետ Բիրոն, Օբէհօվացի Իվան Բօբօվ, եւ Բանով վօյվօտաները եւ ուրիշ շատերը մահուամբ պիտի պատժուէին։

Զարապուշակ կախաղանները քաղաքին ծայրը իրենց զոհերուն կը սպասէին։

Իրինան բոլորովին տեղեկութիւն չունէր այս մասին . . .

Մահուան դատապարտուածներուն կը թոյլատրէր իրենց ազգականներու հետ վերջին տեսութիւն մը ընել. մահմետականները բացառիկ վեհանձնութիւն մը ունին սա պարագաներու մէջ։

Վարժապետ Բիրօի աղջիկը անարգել բանտը մտաւ, զապթիէները այդ օրը պատրաստուելիք արիւնալի խընճոյքը գիտէին եւ լռութեամբ ճամբայ կուտային Իրինային։

Երբ բանտի գլխաւոր գաւիթը մտաւ, հարիւրաւոր աչքեր հետաքրքրութեամբ Իրինան դիմաւորեցին, իբր անգիւ աշխարհէն երեւոյթ մը. աղջիկը իրաւամբ հրեշտակի կերպարանք ունէր։ Կարճ ժամանակամիջոցի մը մէջ, շատ տառապանքներ քաշեց, իր կարմրուկ այտերը տըժգոյն, ինքը դալկահար, մարած աչերով, հազիւ կրնար այդ սարսափելի թագաւորութեան բնակիչներու ստուար ու խիտ բազմութեան մէջէն ճեղքելով անցնիլ, որոնք հրաշալի այցելուին տեղ տալու նպատակաւ ուեւլի կը խռնուէին։ Իրինայի լոյսի պէս պայծառ ու ջինջ աչքերը տրտմութեամբ կը նայէին այդ կիսախաւարի մէջ պլպլացող տանջուած դէմքերու վրայ։

Նա ճիգ կընէր այդ ծանօթ դէմքերը վերյիշելու, բայց ամենն ալ անճանաչելի եղած էին այդ խոնաւ ու խաւարչին նկուղին մէջ։ Ինք ալ անճանաչելի եղած էր. երբեմնի սեւաչեայ Իրինան, լի գեղեցկութեամբ ու կեանքով, իր բոցավառ նայուածքովը իր շուրջը սէր կը ներշնչէր. հիմակ աղջի Իրինային շուքը մնացած էր։

Վերջապէս մօտեցաւ հօրը. երկուքն ալ իրարու երեսը նայեցան, լռելեայն. եւ աչքերնին ինկաւ զապթիէն որ Իրինան կառաջնորդէր։

— Մեծ յոյս ունիմ որ իմ Իրինաս զիս չի պիտի ամաչեցնէ, դու չես սովորած ողբալու ըսաւ հայրը։

— Հիմակուընէ պիտի սորվե՞ի յարեց աղջիկը. մինթէ չէի՛ն . . . տեսաւ հօրը շղթաները, եւ ծնրադրելով զանոնք համբուրեց. հայրն ալ իր աղջկան ճակատը համբուրեց։ Իրինա փափկանուղ աղջիկ չէր. նա պըզտիկուց փափուկ խնամքէ զրկուած, հօրը խիստ դաստիարակութեամբը մեծցած էր։

Դժբախտ հայրը ուրախութենէն չէր կրնար նայիլ իր աղջկայ սրտաբեկի նման լուսավառ երեսին. աղջկան ներկայութիւնը գերբնական ազդեցութիւն գործեց եւ իր հոգեկան աշխարհը այեկոծեց։

Թարգմ. Գ. Ս.

(Տարունականի)